ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 23 >> << օգոստոսի >> 2019թ. N ՄՊ/344-2019

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի ՆՄՈ/332-2019 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի օգոստոսի 8-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում 2019 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու մասին>> ՆՄՈ/332-2019 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշման N1 հավելվածում՝
      ա. <<Ա. Պողոսյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ>> բառերը փոխարինել <<Ա. Վասիլյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ>> բառերով,
      բ. <<Ա. Ավչյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ >> բառերը փոխարինել <<Ա. Ղորղանյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ՏԻ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ>>բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Invalid signature

X

VERIFIED OCSP 8/23/2019 17:56:31 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230